

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/6**

**22 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Արտավազ Միրզոյանի 03.07.2014 թ-ի գրությամբ բերված միջնորդությունը տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը ուշ ներկայացնելու համար 5%-ի չափով հաշվարկված տուգանքը վերանայելու վերաբերյալ:

#### **Քաղաքացի Արտավազ Միրզոյանի գրությունում բերված փաստարկները.**

Քաղաքացի Արտավազ Միրզոյանը հայտնում է, որ 30.05.2014 թ-ին վճարվել է վարչական տուգանք՝ գումարով 20000 դրամ, հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

Հայտնում է նաև, որ 31.05.2014 թ-ից չի ներկայացվել ֆիզիկական անձի տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը, այն պատճառով, որ չի աշխատել էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունը: Այդ մասին բազմաթիվ անգամ Արտավազ Միրզոյանը հայտնել է թեժ գիծ, ինչպես նաև՝ տեղեկացրել է Կենտրոնի հարկային տեսչություն գրավոր նամակով և էլեկտրոնային տարբերակով: Մասնավորապես, Կենտրոնի հարկային տեսչություն դիմել է գրավոր 03.06.2014 թ-ին և 10.06.2014 թ-ին, իսկ էլեկտրոնային տարբերակով թեժ գծին՝ 13.06.2014 թ-ին: Սակայն, վերոգրյալ հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար Կենտրոնի հարկային տեսչության կողմից հաշվարկվել է տուգանք 5% չափով:

Ելնելով վերոգրյալից՝ Արտավազ Միրզոյանը խնդրում է վերանայել հաշվարկված տուգանքի գումարը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ քաղաքացի Արտավազ Միրզոյանի կողմից տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը մինչև 15.04.2014 թ-ը ներկայացվելու փոխարեն, այն էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 26.06.14 թ-ին: Արդյունքում, Արտավազ Միրզոյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ, ինչպես նաև ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ 24-րդ հոդվածի դրույթներով Կենտրոնի ՀՏ կողմից հաշվարկվել է տուգանք՝ գումարով 300.000 դրամ:

Քննարկման ընթացքում հաստատվեց այն հանգամանքը, որ Արտավազ Միրզոյանի կողմից տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել ՀՀ ԿԱ ՊԵԿ

հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգում առկա խնդիրներով: Այդ խնդիրների վերաբերյալ Արտավազ Միրզոյանը բազմիցս բարձրաձայնել է թե Կենտրոնի հարկային տեսչություն, թե ՀՀ ԿԱ ՊԵԿ թե՛ գծին (հեռախոսազանգերի գրանցամատյանում առկա են համապատասխան գրառումներ):

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված խախտման առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հաշվետվությունը (հաշվարկը) ներկայացնող անձի կողմից արարքը կատարված լինի մեղավորությամբ: Հետևապես, սույն գործով իրականացվող վարչական վարույթի ընթացքում անհրաժեշտ է նախ պարզել Արտավազ Միրզոյանի վարքագծում մեղքի առկայության փաստը, ինչը, սակայն, քննարկվող դեպքում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգում խնդիրների առկայության հետևանքով օրենսդրությամբ սահմանված ժամկետում հաշվետվություն (հաշվարկ) չներկայացնելը չի կարող առաջացնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն, քանի որ զանցակազմը լիարժեք չէ՝ արարքի սուբյեկտիվ կողմի մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Քաղաքացի Արտավազ Միրզոյանի 03.07.2014 թ-ի գրությամբ բերված միջնորդությունը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ